


97
ARMA

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ 5
ԻՍՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի ճարտար օրերը : Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ : Երկու ք/ա ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիմ :
Զհրատարակուած գումարը նշանակուի :

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅ ԲԺԻՇԿԱՌԻՆ

Գրեթէ երեք շաբաթէ 'ի վեր վառնա
հասած է բնիկ կովկասցի Օրիորդ Մէքիլ Մար-
գարիտ Բէքլէրեան, որ Լ իոնի բժշկական հա-
մալսարանի մէջ իր ուսումը կատարելագործելէ
յետոյ բժշկական վկայագիր ստացած և Գերմա-
նացի բարեսէր ընկերութեան մը կողմէ հոս զըր
կուած է՝ անձնուիրաբար դարմանելու թշուառ
Հայ գաղթական հիւանդները, գեղերն ևս ձը-
րիապէս մատակարարելով անոնց :

Նորին Արքայական Բարձրութիւն Պուլկա-
րիոյ Իշխանը գնահատելով մարդասէր բժշկուհի
այն սոյն գովելի գաղափարը, բարեհաճած է
արտօնել զինքը իր բժշկութիւնն 'ի գործ դնելու
Պուլկարիոյ մէջ, մինչ ուրիշներ, տիրող կանոնին
բացորոշ տրամադրութեանը համաձայն՝ պար-
տաւոր են Պուլկարեան սորվելէ և կրկին բնու-
թիւն անցունելէ վերջը միայն բժշկութիւն ընե-
լու արտօնութիւն ստանալ :

Պատուելի Ա. Ամիրխանեանցի աղջկոնց
վարժարանը այս առթիւ հիւանդանոցի վերա-
ծուած է, ուր ամենայն կանոնաւորութեամբ կը

խնամուին ամենաբաւարարող քանակութեամբ : Վարժա-
րանին մէկ սրահն ալ դեղարանի վերածուած է,
ուր Գերմանիայէն եկած բաւական քանակու-
թեամբ գեղորայք կը գտնուին :

Դարմանողներուն խոստովանութեանը
նայելով յիշեալ աղետալ օրիորդը կատա-
րեալ խղճահարութեամբ դարմանները կը սիրէ
իր բոլոր տառապեալ բոլորներուն ու եղբայր-
ներուն՝ որք իր գործագութ մարդասիրու-
թեան կոչում կ'ընեն :

ՎԱՌՆԱԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Երկու շաբաթէ 'ի վեր վառնա գտնուող
մեր Ռուսճուգցի բարեկամներէն մին, կարծելով
որ քաղաքիս հայկական ընթերցարանն ալ
Ռուսճուգցի ընթերցատան պէս ճոխ պարու-
նակութիւն մը ունի, քանի մը օր առաջ
ընթերցատան յատուկ սենեակը կը դիմէ
լրագիր կարգաւոր : սենեակին անճաշակ յար-
դարուածքն առաջին անգամ աչքին կը դարնէ
և ի զուր կը փնտռէ Պոլսական կարեւոր
օրաթերթերն ու այլ եւայլ ուսումնական հան-
դէսներ :

Ընթերցասեղաններուն վրայ Նոր Դարի

և Մշակի քանի մը գունաթափ թիւերէն ու մէկ քանի հաս ալ Պասկեր անուն անարժէք հանդէսէն ուրիշ բան չի գտներ դժբաղդաբար:

Հոն գտնուող ընթերցողի մը կը հարցնէ թէ Արարատի, Հանդէս Ամսօրեայի, Բիւզանդիոնի կամ Մասիսի թիւերէն չի կա՞ն, կը պատասխանուի թէ՝ հին թիւերէն կան:

Ու յուսախաբ երիտասարդը կը մեկնի՝ զարմանալով ընթերցարանի վարչութեան անարդարանալի անտորբերութեան վրայ, որ ցարդ լուրջ ձեռնարկ մը չընեն ընթերցարանը ճոխացնելու կարեւոր եւ օգտաշատ հրատարակութիւններով:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՆ Մ...Ա...

Ռուսճուգ

Կարգացինք «Մշակ»-ի մէջ ձեր մէկ գրութիւնը, որուն տակ այս անգամ եռասուղ մը գնելու համարձակութիւնն ալ չէիք ունեցած՝ խմբագրականի տարազը հագցնել տալով անոր: Պէտք է գիտնայիք թէ սովորական խաղեր էին ատոնք մեզ համար, որ ՔՍԱՆ ՏԱՐԻ շարունակ խմբագրական կեանքի մէջ ապրած ենք:

Մեզ կը մնայ արգահատիլ ձեր խելապատակին աղքատ պարունակութեանը վրայ, որ փոխանակ ձեր վրայէն նետելու խնամն ու հայհոյիչ մարդու գարշ աղտոտութիւնները, բոլորովին կը փոխէք ձեր ճամբան ու կը ջանաք մեր ճակատը մրտել այնպիսի բառով մը՝ որ մեզմէ աւելի ձեզ կրնայ պատկանիլ իր ամբողջութեամբը:

Մենք եթէ ստիպուեցանք պրպտել ձեր ո՛վ ըլլալը, պատճառը այն էր որ կը փափագէինք գիտնալ նախ թէ որո՞ւ հետ էր մեր գողճը, խելացի՞ թէ տխմարի. երբճըճ մարտութիւնը եկաւ հաստատել թէ այս

վերջին բառը աւելի կը պատշաճէր ձերնը՝ կարագրին, ստիպուեցանք ձեզ ներկայացնել այնպէս՝ ինչպէս որ արժան էր և բանաւոր: Ասկէ զատ, պէտք է գիտնաք նաև թէ այս գործին մէջ եթէ յրճեա մը կայ, այն ալ նոյն իսկ ձեր վառնայաբնակ մէկ շատ մտերիմ բարեկամնիք է, որ իր խորհրդաւոր սենեակին փոշիներուն մէջ թաղուած, ձեր ներբողականը կընէ ամենուն եւ որուն բովէն կ'անցնին միշտ ձեր ամեն գրածներն ու գրելիքները:

Բոժոժիկ — Ու եթէ փափագիք, յաջորդ թերթով մը ձեր այն լրտես բաւեկամն ալ կրնանք ներկայացնել հանդերձ մեր նըւաստութեան նոր մէկ կոնդակովը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՀԱՅԵԼԻ»-Ի

Ռուսճուգ, 8 Սեպտ.

Բարեկամ,

Կ'երեւի թէ Ռուսճուգ անակնկալներու վայր մը եղած է վերջին ժամանակներս, զի կ'ստիպուիմ միշտ, թէ և ա՛յնքա, աղէտներու և անակնկալ պատահարներու վրայ գրել Ձեզ:

Տեղւոյս Աղբատախնամը Սեպտ. 6 Շաբաթ գիշեր որոշած էր շտապներէն սպասուած թատերական ներկայացումը տալ, որուն հասոյթը գրեթէ ամբողջապէս ալքատ գաղթականաց համար առաջիկայ ձմեռնային եղանակին աւնուելիք վառելափայտին ծախուցը պիտի յատկացուէր:

Երեկոյեան ժամը 9 է, Հայոցս բարձր դասակարգը ինչպէս և ամեն ազգէ խուռն բազմութիւն մը կը զիմէր թատերափայրը, Սանթրալի սրահը, ուր Աղբատախնամի մեղուաջան անգամները հիւրնկալի դերը ստանձնած էին:

Թատերասրահը որոշեալ ժամանակէն

շատ կանուխ լեցուած էր ընտիր բաղմու-
թեամբ մը, որուն մեծ մասը անհամբեր՝ ծա-
փահարութեամբ կ'ուզէր փութացնել վարա-
գոյրին բացումը: Ընդհանուր ոգեւորութեան
մէջ վերջապէս կը բացուէր վարագոյրը:
«Կարմիր թղթապանակը», անուն բարոյալից
եւ ընտանեկան թատերագութիւնն էր որ
հայոց Վեսէլօ անուանեալ վարժ խումբը
առաջին անգամ կը ներկայացնէր:

Ա. եւ Բ. արարուածները ընդհանուր
գոհունակութեան արժանացած էին, իսկ
երբ Գ. ը կը բացուէր, ժողովուրդեան մէջ
իրարանցում մը սկսաւ, որուն յաջոր-
դեց թատերասրահի ձեղունին շարունակա-
կան թնթիւնը: Կրնաք երեւակայել թէ այս
բանը ինչ ազդեցութիւն կընէ հասարակու-
թեան վրայ: Անկարագրելի խառնակութիւն
մը, հայր, մայր, տղայք եւ օրիորդք միա-
համուռ փախուստի ծամբայ կը փնտռէին.
ամեն բերնէ լալու եւ երկիւղի աղաղակներ
կը լսուէին: Այս խառնաշփոթութեան մէջ
մէկը չէր կրնար դուրս ելնել, զի թէ ա-
թոռներու անկանոն կուտակոնը եւ թէ ժո-
ղովրդին տարբեր հոսանքները արդէնք կըլ-
լային ասոր: Մէկ քանիներ ի գուր սրահի
պատուհանները կը կոտրէին ծամբայ գըտ-
նելու նպատակաւ, որ ժողովուրդը աւելի
սարսափեցնելէ ուրիշ օգուտ մը չունէր:

Այս նմանը չի տեսնուած իրարանցու-
մը, որ Վառնաի Պուլկար եկեղեցւոյ պատա-
հարը կը յիշեցնէր, գրեթէ տեւեց մէկ քա-
ռորդ ժամ, ու ժողովուրդը դժուարաւ կա-
րողացած էր ինքզինքը թատերասրահէն դուրս
նետել: Ուրախալի է ըսել թէ այս ընդհա-
նուր խառնակութեան մէջ ո եւ է ծանր
անձնական վնաս չէ պատահած, թէեւ նիւ-
պէս բաւական կորուստ կայ:

Աղքատախնամի անգամոց ըրած ջան-
քերը գնահատելի են, որք պատահարի մի-
ջոցին հանդիսականաց մէջ մտնելով զանոնք
կը հանդարտեցնէին:

Առնուած տեղեկութիւններէ իմացանք որ
Սանթրալի պանդոկապետը տուած է պատ-

ճառ այս խառնակութեան, թատերասրահի
վրան մի քանի մարդիկ հաներ է որպէս զի
սրահին շուրջը խռնուող փողոցի տղոց վրայ
ջուր լեցնեն:

Եւ որովհետեւ այն միջոցին Ռուսճուգի
պաշտօրական մարմինը Իշխանուհին դիմաւոր-
ելու համար մեկնած էր քաղաքէն, սոյն
պատահարի միջոցին եւ ոչ մի ոստիկան չէր
գտնուէր, որով կարգ մը անյարմար միջա-
դէպներ տեղի ունեցան հայ անհատներու եւ
պատահարին պատճառ տուողներուն միջև:

Գրեթէ կէս ժամ վերջը կը հասնէին
ոստիկանութիւնը, քաղաքապետութիւնը եւ
այլ պաշտօնական անձինք, որք անմիջապէս
ամբողջ ցրուելով խաղաղութիւնը վերահաս-
տատեցին:

«ՎԵՍԵԼՕ» ՀԱՅԵԼԻԱՆ ԽՈՒՄԲԸ

Սեպտ. 17 չորեքշաբթի օրը Ռուսճու-
գէն քաղաքս պիտի հասնի վերոյիշեալ
խումբը՝ որ միշտ գոհացուցած է Պուլկա-
րիոյ թատերասէրները, եւ 18ի հինգշաբթի
գիշերը Անկէլ Սլավօվի սրահին մէջ պիտի
սկսի ձմեռնային շրջանը, բոլորովին նոր
բիւսներով:

Ա. Գ. ԱՄԵԱՆԻ

ԱՆՏԻՊ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԲԵԿՈՐ ՄԸ

Ողբացեալ Ագամեան իր մէկ բարե-
կամին զրկած նամակին մէջ հետեւեալ ութը
տողիկները գրած է.

Նման հովիւն կոշտ սըրնգին,

Որ երբ հնչէ սիրավանկ,

Ծաղկազգեցիկ ճոխ լերինք՝

Կը տան նորա արձագանգ:

Այնպէս քաղցր էր եւ սիրուն

Գիրն մտերմիդ սիրաշար,

Անշուշտ սրտէդ ազնուասուն՝

Առած էր նա իւր պաշար:

Թ Ր Ք Ո Ւ Շ Ի Ն

Եթէ Մանթէկացցա — իգական սեռի տարբեր տարբեր պիտուքներուն այդ հմուտ զանազանիչը, — Արեւելք ճամբորդած ըլլար, իր շինած կանացի բռնութիւններու ալպովին մէջ, հաւատացէ՞ք, էն աղւոր տեղը պիտի թըրքուհիին տար, պատկերացունելով մեզի այդ բիւիը իր համակ խռովիչ պաշտելիութեամբը: Ու եթէ միջավայրը ներէր Արփիարին, ան ալ թերեւս փորձուէր գրելու իր գլուխ գործոց Հայոռնիէն առաջ այս տիպարը, ու ասոր համար իր ծանօթ նրբամտութեան գեղեցիկ պաշարը սպառէր՝ որուն արժանի է ստուգիւ այս անգուգական ներկայացուցիչը անպիտէականներուն:

Կը նայիմ սակայն որ Մանթէկացցայի մը աշակերտած ըլլալու չէ եղեր անպատճառ, ոչ ալ Արփիարի մը՝ հետեոյ՝ ասոր բռնութիւն ընելու համար, բաւական է որ քիչ շատ սլքբտկացած ըլլաս անոր քղանցքին շուրջը ու աչքերդ աղէկ հետաքրքրուած ըլլան անոր փողփողուն հրապոյրներէն ու թագուն նիստուկացէն ներս թափանցելու:

Թրքուհիին այն էական է որ ինը տասը տարուէն գիտէ արդէն բոլոր այն բաները զորս կին մը պէտք էր արբունքի տարիքին մէջ գիտնալ:

Իր գեղեցկութեանը մէջ չիս գիտեր ինչ մը կայ որ նայողին հոգին կը վրդովէ անպատճառ: Այդ «չիս գիտեր ինչ» իր գլխուն խորհրդաւոր ծածկոյթին ու երեսին անցուցած բարակ կազին կը պարտի:

Արիողիտ եթէ ողջ ըլլար՝ կոշիկները տանիքը պիտի ելլային ապահովապէս, բանի որ ասիկայ կար:

Հրուտ ականողիքը այնպէս մը գիտէ թարթափել ու անոնց մէջ անանկ կենդանի բոց մը ունի պահած որ ամէն արու նայուածք կարող է խողտացունել:

Միսի հարստութեան գեղեցկութիւն մը, դէմքին հրեշտակային ձուածեւէն բռնէ մինչեւ

բուսները: Ոմանք բիւափին ու ճարպոտ խորտէքներուն կը վերադարձնայ գիւղութիւնը, ուրիշներ կ'աւելցունեն ինչ... ուժ՝ժ՝ժ, մի պնդէք, չպիտի կրնամ ըսել:

Իր էն շատ յաճախած տեղը շուկան է, Պոլսի կամարակապ շուկան, ուր շաքար թը մէջ մը գոնէ կերթայ գաշտելի իր գըրպանը, շիք հագուած տէլիգանը խանութպաններուն տարփոտ ախարկներէն ու ապրանքի մը համար շուայլուած գովեստներէն շլացած՝ որոնք կէս մըն ալ իրեն ուղղուած են:

Կրօնքին պահանջովը իր բանտուած կեանքը առեթ տուած է իրեն՝ ամեն կիներէ աւելի հաշուազէտ և խորամանկ ըլլալու սիրային յարաբերութիւններու մէջ. էն տկար կողմը քեզի ժպտիլ ուղած բոգէին՝ կարենալ ժպտիլ է իրեն «պայկըն պագըշ», ով մը որուն խենթն է: Ասիկա կըցա՞ր մի, անձնատուր է ալ:

Իր արդուարդը: Բայց նախ ինծի ըսէ՛ք թէ ո՞ր ազգէ կնիկ իրեն պէս կը հագուի կը ձգուի: Հոգի կուտայ փայլունին և աչք անոնց պուռտ գոյներուն: Մետաքսին ու բեհլէին էն նուազիւ գործուածներէն շինուած է իր ֆէրաքէին գերպաք, վրան խոշոր ու տեսքոտ ծաղիկներով նկարուն: Այդ ֆէրաքէն է որ գիտէ իր գաղանապահ ու հանգստաւէտ ծալքերուն մէջ պարտկել առաջ ունենորութիւնը: Թաթիկները ձեռնոցապատ են միշտ, այդ գոց մատուղներուն վրայէն կ'ուղէ դնել իր շողշողուն մատնիները, վայելուչ ցուցամոլութեամբ մը յաճախ լոյսին բռնելով զանոնք: Ու հովանոցը բաց է ամեն ատեն, գլխուն փակած գրեթէ, շուք ըլլայ թէ արեւ: Իր՝ զենքն է ատիկա, որուն երկրաշափական կիսակրօններէն գաղտագողի կրնայ գիտել «աչքին խածած» ներքը: Աղէկ հագրիծուիլ գիտէ, սրունքներուն առոյգ բուսբերը ամբողջ երեւալու աստիճան, ու բաղդատ մամբ երեսին՝ աւելի բուխտիտ կերպով հուրանի կը թողու իր ուրիշ կողմերը, թեւերը, թէ որ կ'ուզէք, գրեթէ մինչեւ հոն՝ ուր կարկուտներու պէս ձերմակ դաստակը կը

հասնի եւ արմուկը կ'սկսի ժանեակի յորդ-
փրփուրի մը մէջէն՝ որ իր թեղանիքը ելե-
լած է :

Չես գիտեր ինչ քաբախով մը, չի խը-
նայեր բնաւ իր բնական մեղայշ աչուրներուն
թերթերունքը մոտեւ ծարիրով ու կիւզելիւմ
այտերուն թաւիչը արուեստակիւ այն էն ջի-
ղի դպչող նիւթերով որոնք կը կոչուին շպար
ու սնգոյր եւ որոնց էն նորեկներէն ինչի :
Ու անանկ հոտերով կ'օծուի, որոնց զգիլիչ
բուրումնաւետութեամբը նմանը չի տեսնուած
կերպով կը գինովնաս : Թուե՞մք քանի մը հաս-
թեւարիկ, միսկ, ամպեր :

Երբեմն երեսի ծակոտէն գիւմալը վեր
կը նետէ, գլխուն վրայ, ցոյց տալու համար
իր շունչէն կարծած եալապուս դէմքը, սի-
րուն սեւ կրորի մը մէջ շրջանակուած : Կրօն-
ուհիի մը կերպարանքը կ'աւնէ այդ պահուն,
սանկ, ինտո՞ր ըսեմ, սրբապիղծ կրօնուհիի
մը, որ իր գործած մեղքէն շառագունած է
եւ որուն տարբեր երկիւղածութիւնով նայիլ
պիտի ուզէիր :

Հակառակ ամուսինէն շատ սիրուելուն,
ինքը պակաս գորովով մը կը պաշտէ զայն,
եւ իրաւունք ալ սնի, որով հետեւ իր օ-
րէնքին արամագրութիւնովը իր Լքումը ան-
խուսափելի է օրին մէկը : Ասիկա անդիտը-
ւած է իրեն որպէս զի իր տարփանքը ցաթ-
կտուր մը ըլլայ սիրտին սիրածէն աչքին հաւ-
նածը, եւ փոխադարձաբար :

Ենայրի մէջ կը սիրէ բնակիլ, ա-
մանները մանաւանդ Վոսիորի ափունքնե-
րէն անմարդաձայն ու յանգուշիկ մէկ խոր-
շը, որուն մարմարիոն սանդուխներէն կու-
գայ նազանքով մը իր նրբամարմին գայրգին
մէջ ցատկել ու ծովուն սեւան վարել հեշ-
տօրէն, նէկիթէ թուալէթով մը, սպիտակ
պիտիւննախիւ անխնամ կերպով գլխուն ձը-
գած ու երկրագոյն լարշաւով մը իր անձ-
նիքը պլլած, յաճախ անգիտակ'նաւակը վա-
րող համալսանիս համար խռովքներուն ... :

Կը սիրէ բնութիւնը իր ամենէն կոյս
ու անոտնակոյս թաւուտներուն մէջ : Հոն է

որ կ'երթայ իր դրացուհիին հետ փռուիլ ա-
րեւելեան նկարակերտ սեփնասէին վրայ :
Քովը, խոտերուն մէջն է հողէ բարձիկը,
Գըսըգըլի կամ Պէնտերուն անմահական ջու-
րովը լեցուն, ու ձեռքն է արծաթ գաւաթը,
մէջը ոսկեզօծ, որուն կը դպցունէ իր կեռաս
շրթունքը, ջուրէն յետոյ հայելի ընելով նաեւ
գաւաթին ներսը՝ իր դիցանուշային բոօֆիլին
ու մարգրիտ ակաւներուն : Երազանքի ժա-
մեր են ատոնք իրեն համար, ուր միտքը հեշ-
տութենէ հեշտութիւն կը թաւալի, ու աչ-
քը վերեւ ծառերուն անուշ կանանչովը կար-
բենայ ... :

«Տօլչէ ֆառ նիանթէ» խաղական ա-
ռածը իրեն չէ՞ որ կը պատշաճի ամենէն ա-
ւելի :

Իր պերճ ներկայացուցիչները տեսնալ
ուղողը քաղքէն դուրս ելլալու է, դէպ ի
արուարձանները, Չամլըճայի, Չիֆթէ հա-
վուղի կամ Գըզըլթօբաքի շքեղ բացաւայ-
րերը, որոնց մէջ ժուռ կուգայ անիկա՝ հու-
րի մը չափ քաղցր ու վեհաշուք, կասաւնա
ձիերու լծուած իր անձնայատուկ պոնէիով,
զոր ինքը կը վարէ պաշտելի դիրքով մը, ո՞-
թոնկը հովէն ուռեցիկ, ու ճերմակ «րօն ժէ
եւելտիրմէն» կառքին վաղքէն ծփծփուն ...
Դուրեան եթէ այս էակը տեսած ու վրան
քերթուած մը գրած չըլլար, գուցէ տարի մը
աւելի ապրէր խեղճը :

Իմաստով ալ, արտասանութիւնով ալ
անուշ անուններ ունի : Կը զարմանամ թէ
դիցաբանութիւնը ինչպէս մինչեւ հիմա գող-
ցունք մը չէ ըրած այդ գողտր անուններէն :
Իր լեզուն՝ արաբերենով այնքան հարստ-
ցած, ինքը մինակ խօսելու է, իր կանացի
փափուկ ու գաշն ձայնովը, անելու համար
անկէ այն համը զոր ոչ մէկ լեզու ունի :
Այ՛թիւ մը կամ Էվվէթ մը ըսել տուէր ի-
րեն, ըսածիս համոզուելու համար :

Իր տոհմային երգերը որք կը ծանչ-
ցուն թիւիթի անունով, սոյրգիներ են
բոլոր, շատ յուզիչ ու շատ տխուր, լալ
ուղիւ ու չի կրնալ լալու չափ : Ամբողջ իր


գեղն ու շնորհն է որ կ'երգուի, ատոնց մէջ սե ցաւագին բառերով՝ զորս կը կետադրեն միշտ հեւրոտ հառաչներ:

Արուն իր էն ստրուկ տարփանքին մէջ է ալ, որ իր պաշտումովը խղունչի պէս կը սողոսկի անոր մօտիկ եւ որ իր պաղատագին կոչերը կը թոցունէ դէպ ի անոր՝ յուսահատ գալարումներով:

* *

Վերջաբանը կ'ուզէք այս գրուածքին: Ահաւասիկ: Քրիստոնեայ երիտասարդը որ քիչ շատ ապրած է աշխարհիկ կեանքի մէջ՝ մատտիպար մի միայն կունենայ, մտերմանալ այս էակին հետ ու միշտ անոր յիշատակովը ապրիլ:

T. O.



ՄԱՐԱԶ ՏԵՓԻՆԷ ՄԱՃՈՒՆ

Նախապաշարումը տակաւին վերցած չէ մեր ընտանիքներու մէջէն, հայ ընտանիքներու մեծագոյն մասը դեռ կը հաւատայ Գըրսէվէի Ներսէվէի, Մեռելիոսի Կնունքիոսի, Նաղարի մաղարի պէս անգոյ հիւանդութիւններու, որոնց գեղն ու ճարը գտնալու համար սիրայօժար իր գրամը կը տանի կը լեցնէ բնական բաղքին մէջ գտնուած Վայնայող կամ քաղցրա նետող կնիկներուն ձեռքը, որոնք դրամ շորթերու մասին քէֆալոնեացի աւագանները կը գերազանցեն:

Անցածները տեղացի Հայ կին մը, ֆալ-

ճի կնկան մը կը դիմէ ի թաթար մահալլէսի, ու անոր քաւրիք ընելով աղջկանը ունեցած «Միճազըղլըք», անուն հիւանդութիւնը, 5 դահեկան ձեռքը կը քնէ գաւաթ մը մաւնումն աւնելու համար, որ պարզ թթումի անուշիչէն է եղեր անցած տարուէն մնացած:

Վարպետորդի կինը նախ բերանացի կը սէ եղեր այս մաճունին բաղադրութիւնը, որ ահաւասիկ.

«Պիր տիրէմ՝ Նազ, Իբի տիրէմ՝ Նիեազ, Իւչ տիրէմ՝ Ճիլվէ, Տէօրթ տիրէմ՝ Շիլվէ, Պէշ տիրէմ՝ Նեզաքէթ, Ալթը տիրէմ՝ Զիւրաֆէթ, Եէտի տիրէմ՝ Ինսանիլէթ, Սէքիզ տիրէմ՝ Մուհապէթ, Տօգուզ տիրէմ՝ Միւրվէթ, Պիր տիրէմ՝ Զէվք, Իբի տիրէմ՝ Սէֆա, Իւչ տիրէմ՝ Զէֆա, Տէօրթ տիրէմ՝ Կիւլիւշ, Պէշ տիրէմ՝ Օնայըշ:

Իշթէ գըլըմ, պէն՝ պու էճգալարըն ճիւմլէսինի պիր էտիպ, իչինտէն ճէֆանըն չէօբլէրինի չըգարըպ, հավանտա տէօյիւպ, սէֆա էլէկինտէ էլէյիպ, մուհապէթ թէն՝ ճիւսինտէ աշգ աթէշիլէ «պիզտէն էյիլէրին», գուվվէթիլէ գայնատըպ պու մաճունու ետբարըմ, հասթա օլանլարա պունտան վէրիլիրսէ՝ իզնալլահ բիրբաք օլուրլար:

Գաւաթ մը գապազ րէյեյին 5 շըշի քըշիւու համար ասանկ գեղագիր մը շատ է պիտի ըսէք. — Ո՛չ:




Պատշգամէն վար նայող տիկնոջ մը կաղերսէ դարավերջիկ մուրացիկն.

— Վերէն նայեցէք, վարէն... ողորմեցէք:



ԳԻՏԱԿԱՆ ՁԲՕՍԱՆՔ



ՎԱՅՐԻ ՀԱԳԱՆԱԿԻ ԿԱՆԳԵՂ

Երբ վայրի շաղանակը հասուննալով գետինը իյնայ՝ կրնանք զայն իբրեւ կանգեղ գործածել :

Նախ նոյն շաղանակը չորս կողմէն ըստ բաւականին ասեղով մը պիտի ծակծկենք, յետոյ զայն 12 ժամ ձիթաիւղի մէջ ձգելէ ետքը, կեդրոնը բիչ մը խոշոր ծակ մը կը բանանք. — այս ծակը շաղանակին մինչեւ յատակը չի պիտի բացուի. — նոյն ծակին մէջ պիտի զետեղենք բաժակէ լնելով պլորուած պատրոյգ մը : Արդ, եթէ շաղանակը նոյն վիճակին մէջ ջրով լեցուն գաւաթի մը մէջ դնենք՝ ջուրին երեսը կը մնայ, (տես՝ պատկեր) եւ պատրոյգը մինչեւ առաւօտ կը վառի :

Ահաւասիկ զուարճալի միանգամայն խնայողական կանգեղ մը :

Հաղանակը ջուրին երեսը կեցնելու համար տափակ տեսակէն ընտրելու է եւ ոչ թէ երկայն :

Դարավերջիկ ամուրի տիկնոջ մը երազն

..... Սա կուզեմ. —

Իմ աղւոր աղջկան աղւոր լեռնը փեսայ կուզեմ :

Պէ՛յ օղլուի մէջ՝ տուն — տեղ, արսա կ'ուզեմ :

Կիրակի գիշեր հարսնիքին շտկած պիւֆէ կ'ուզեմ :

Կեանքիս մէջ հոգ մը չունենալ կ'ուզեմ :

Ամեն տարի Պուրկազի բաղնիք երթալ կ'ուզեմ :

Ու դրախտին մէջ աթոռ մը ունենալ կ'ուզեմ :

Կ. Ա.

Բո՛ժ. — Ես ալ շատ բան կ'ուզեմ, բայց տրուող չի կայ կըսեն :

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 23

Եռանդամ ինչ եմ,

Վերջինս է բոլոր :

Բոլորս ոչինչ եմ :

””

Թիւ 22 հանելուկի լուծումներ ԿԷՍ :

Ս. Մկրտիչեան :

Հասցենիդ իմացուցէք որ նուէրնիդ ղրկենք :

ՊԵՐՁ ՀԱՆԵԼՈՒԿ ՄԸ

Սիլիսդէէն Տեար Կ. Ակաբի կը հաղորդէ :

Ո՞վ պիտի լուծէ սա պարզ հանելուկը, որ դառնապէս կը պատկերացնէ հայոց բարվրնիւ կամ չը-բարվրնիւ գործիչներու այժմեան բարոզն : Նուէրն է մէկ եռամսեայ “Հայելի” :

Բշխո ժբշ դժբշո շկսիծօջ եւրփոիզծյ ճիւ նիսպօշք դեյ օժ դԼ ջյգչկ բբշի ճգն դդցլեւ ազպսիիքեջ ջաւեօւմ Լեեզ դդշիւ գսեմլո

Բաժանել այլագրեալ նախադասութիւնն հինգական գիր պարունակող մասերու : Իւրաքանչիւր մասի առաջին գիրն կը փոխադրուի այբբենարանին մէջ իրմէ ետ գտնուող առաջին գրով : Երկրորդ գիրն կը փոխադրուի այբբենարանին մէջ իրմէ ետ երթալով երկու գիր, և որ ի կարգին :

ԱԶԳ

Այցետոմս, հասցէտոմս. նամակա-
գլուխ, հրաւիրատոմս, բարենիշ, տոմ-
ոակ, ևայլն ևայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեզօծեալ սէկ քանի գոյներով կը աը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձնա-
րարութիւնք փութով կը կատարուին:
Գին գոհացուցիչ: Դիմել Հաւելի իւրմ-
բագրութեան:

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ

(ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Ի. ԲԱՆՉՈՒՅ

Վառնա ճրգ թաղ Ելտըղ Թապիա

Ամէն տեսակ մեքենաներու, շինութիւն և
նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛
պարզ ջուրով գործող մեքենաներ, նաև շո-
գեմակոյկներ: Ջաղացքի վերաբերեալ ամէն
տեսակ երկաթեայ գործիքներ, գրամական
գասանք, շէնքերու յատուկ երկաթեղէն-
ներ, տեսակ տեսակ ջրհաններ ևայլն ևայլն
կը պատրաստուին: Պատ. Յաճախորդք միշտ
գոհ մնացած են սոյն գործարանի շինու-
թիւններէն:

ՏՕՔԹ. Ե. ԹՈՎԱՐԱՆԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հա-
սարակութեան թէ վերագարձած է Սօֆիաէ
և կընդունի հիւանդներ ամէն օր իր տունը
ի Պալպ Բաղար, առաւօտեան ժամը 10էն
12, իսկ կէս օրէն վերջ 2էն 5: Զորեք-
շաբթի օրերն կէս օրէն վերջ ժամ 2էն 5
ձրիապէս կը դարմանէ:

100 Այցաքարաւ երկու ֆրանքի կը
տպագրուին: Դիմել «Հայկի» խմբագրու-

թեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարու-
թեան թղթատարին ծախք 30 սանգիմ՝ յանձ-
նարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլ-
կարական 5, 10 և 15 սանգիմնոց նամա-
կագրօշմ կր'նդունուի:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԼ

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՄ

ՀԱՒԱՐԱՊԱՆՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳ. ԵՐԳԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա.

ԴԻՆ 2 ՖՐԱՆԳ

Սոյն երգարանը որուն տնօրէնք կ'սպասուէր ժա-
մանակէ մ'ի վեր, 216 էջերով, մեծ խնամքով օրբա-
ղուած, բայց ի հին ընտիր երգերէ կը պարունակէ նաև
բաղնաթիւ նոր երգեր:

Փոփաքողք պէտք է դիմեն առ Մ. ԽԱՉԿԵԱՆՆԵ
Արեւելեան տպարան, Չրգ. Ուշաթ թիւ 1104 ՎԱՌՆԱ.
Վ. առնայէ դուրս և օտար երկիրներէ պահանջուածնե-
րուն իւրաքանչիւրին վրայ պէտք է աւելցնել 20 սան-
թիմ իբր բօլթայի ծախք:



ԿԱԼՎԱՆԻՍԹ

Ամեն տեսակ

տպագրական կա-

ղապարներ պատրաստող, նաև

անձնական և թէ՛ առևտրական կնիքներ:
Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան
պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երե-
ցած քառուղէ կնիքներէ աւելի դիմացկուն են
և դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ
քառուղի գինէն տարբերութիւն չունի: Քա-
ղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով
կը կատարուին: Դիմել ի Վառնա Չիլինկիր-
էր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:

ԳՈՐԾԱՐԱՆԱԿՈՒԹԻՒՆՔ

Ռուսճուգ	Տիարք Եղբարք Սարաֆեան:
Սիլիսդրէ	Տիար Արթաքի Սարգսեան:
Շաւիլա	Յովհաննէս Մաճարեան:
Սօֆիա	Յակոբ Ծերունեան:
Լոնտոն	Հայկ Աստուածատուր:

Отговоренъ редакторъ: Н. Драгулевъ
Печатница «Вз а имени» — Варна